ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Է ԵՄ
ՏՆՕՐԵՆ՝ [illegible] ՌՈԶԱ ԳՅԱՆՋՈՒՄՅԱՆ
ԱՄԻՍ ԱՄՍԱԹԻՎ՝ 01.09.2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՐ 7 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԴԱՍՂԵԿ՝ Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

III դասարանում սովորում է 5 աշակերտ՝ 4 տղա և 1աղջիկ: Բոլոր երեխաները ֆիզիկապես առողջ են: Ապահովված են դասագրքերով անհրաժեշտ գրենական պիտույքներով: Դասարանն ապահովված է համապատասխան կահույքով և անհրաժեշտ պարագաներով: Դասարանում ստեղծված է աշակերտական համերաշխ կոլեկտիվ, որտեղ իշխում է փոխադարձ հարգանքը, ընկերական սերը և համերաշխությունը: Դասարանը պայքարում է կարգապահության, օրինակելի վարքի և բարձր առաջադիմության համար:

2. Ուս. տարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

ՈՒսուցչի նպատակն է.,

ա/ համախմբել, ձևավորել դասարանական կոլեկտիվ

բ/ ձևավորել սովորողների միջև ներդաշնակ, համերաշխահարաբերություններ

գ/ աշակերտների նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում

դ/ սեր և հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ

ե/ ապահովել դասարանի ընդհանուր զարգացվածության մակարդակը,հասնել բոլոր աշակերտների գիտելիքների որակի բարձրացմանը

զ / պաշտպանել աշակերտների իրավունքներն ու շահերը Է/

ձևավորել առողջ ապրելակերպի վարքագիծ

ը/ դաստիարակել հայրենասիրություն, հարգանք և հոգատարություն մեծերի նկատմամբ

թ/ մշակել կուլտուրական վարքի հմտություններ՝ ճիշտ և գեղեցիկ դիմելաձև, խոսքի կուլտուրա

2. Հայեցի դաստիարակություն

- ***Հոգևոր դաստիարակություն***

Աշակերտների մոտ հայեցի դաստիարակության գործում մեծ դեր ունի հայրենասիրության սերմանումը: Սերը դեպի հայրենիքը, սերը դեպի մայր հողը կձևավորի աշակերտների մոտ նվիրվածություն, հավատարմություն: Հոգևոր դաստիարակության կարևոր նախապայմանը բարությունն է:Ազգասիրության ճիշտ ընկալման միջոցով աշակերտները կդառնան հայրենասեր, կպահպանեն լեզուն ու կրոնը: Ծանոթացնել հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոներին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ որպես հոգևոր կենտրոնի, նրա նշանակության ու դերի մասին: Կարդալ Աստվածաշնչյան թեմաներ բարության և մարդասիրության վերաբերյալ:

- ***Գեղագիտական դաստիարակություն***

Գեղեցիկի հետ առնչվելու իրավունքը դաստիարակության կարևորագույն տարրերից մեկն է: Գեղագիտական դաստիարակությունը ճիշտ ձևավորելու համար պետք է ծանոթացնել անցյալի մշակութային ժառանգությանը, մոտիկից իմանալ ժամանակակից արվեստը:

Զարգացնել աշակերների գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը, տեսողական հիշողությունը և տարածական պատկերացումները:

- ***Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն***

Զրույցների միջոցով երեխաների հոգում նպատակաուղղված զարգացնել հայրենասիրական, քաղաքացիական պարտքի՝ հայրենիքին նվիրվածության և հավատարմության զգացում: Երեխաներին տեղեկություն տալ հայոց բանակի, Հայաստանի Հանրապետության զինանշանի, դրոշի, մարզերի մասին:

- *Ֆիզիկական դաստիարակություն*
    - Առողջության ամրապնդման համար ֆիզիկական դաստիարակությունը կարևոր նշանակություն ունի.
    - ապահովել երեխաների ֆիզիկական դաստիարակությունը
    - ֆիզիկական կուլտուրայի սիստեմատիկ պարապմունքների ընթացքում դաստիարակել հետաքրքրություն սպորտի, առողջապրելակերպի վերաբերյալ
    - գիտելիքներ ունենալ օրվա ռեժիմի և անձնական հիգիենայի վերաբերյալ

- *Աշխատանքային դաստիարակություն*

Աշխատանքի նկատմամբ սեր և պատասխանատվություն, կարողություններ և հմտություններ ձևավորելու և զարգացնելու համար օգտագործել մեծերի օրինակները, փորձը, զրույցները և այլն:

Հաջողությունների հասնելու հիմքը աշխատասիրությունն է: Դրա համար անհրաժեշտ է զարգացնել բարեխիղճ վերաբերմունքդեպի աշխատանքը և պարտաճանաչությունը:

- *Բնապահպանական դաստիարակություն*

Հայրենի բնաշխարհի պահպանումն ու խնամքը շատ կարևոր հիմքեր պետք է ունենա յուրաքանչյուր անձի մոտ:

Անհրաժեշտ է կրթել դաստիարակել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի և բնության հանդեպ: Աշակերտներինծանոթացնել բնապահպանական մի շարք կանոնների:

- *Դպրոց-ընտանիք կապը*

Ապահովվել դպրոց և ընտանիք կապը:Կազմակերպել զրույցներ երեխաների առողջության, հանգստի, խաղի, ուսուցման ճիշտ կազմակերպման վերաբերյալ: Այս կապը պետք է շարունակական լինի, որպսզի աշակերտը չտուժի:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	Ուս. աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
	• Ընդունել դասարանը: • Երեխաներին ապահովել դասագրքերով: • Զրուցել գիտելիքի օրվա մասին, կարևորել դպրոցն ու կրթությունը:		դասվար
1	Դպրոցը և մենք: . Աշակերտներին ծանոթացնել իրենց պարտականություններին: Խոսելվարքի կանոնների մասին: .Կարևորել ուսուցման ճիշտ կազմակերպման անհրաժեշտությունը:		դասվար
2	. Զրուցել համագործակցության մասին: . Աշակերտներին ներկայացնել իրավիճակ, որտեղ երևում է երեխաների միջև համագործակցությունը:		դասվար
3	. Զրույց նվիրված ՀՀ Անկախության 31 ամյակին: . Երգել ՀՀ օրհներգը:		դասվար

4	Հանդուրժողականություն. . Սովորողներին ներկայացնել փոքրիկ պատմություն, որտեղ խրախուսվում էհանդուրժողականությունը։ Անցկացնել զրույց գրադարանի,գրադարանավարի և նրանց կարևորության մասին:		դասվար
5	Կիրթ և քաղաքավարի պահվածք. Կծանոթանան վարվելաձևի կանոններին։		դասվար
6	Մեր պարտավորությունները։ . Կիմանան իրենց առջև դրված պարտավորությունները, կսովորենպատասխանատու լինել յուրաքանչյուր արարքում։ . Անցկացնել զրույց քաղաքամայր Երևանի, նրա հիմնադրման մասին:		դասվար
77	. Զրույց << Ոսկեծամիկ աշուն>> թեմայի շուրջ		դասվար
8	Հեքիաթի աշխարհում։ . Կլսեն հեքիաթ, կխոսեն չար և բարի արարքների մասին։		դասվար
9	Տարվա եղանակներ։ . Զրուցել բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունների մասին։		դասվար
10	«Մաքուր պահիր շրջապատդ»։ Օրինակներով ուշադրություն հրավիրիր շրջապատող երևույթների վրա։		դասվար
11	Զրույց ընկերասիրության մասին:		դասվար
12	«Անվտանգ երևակայության» կանոնների ուսուցում։		դասվար
13	. «Անվտանգ երևակայության» կանոնների ուսուցում և ամրապնդում։ . Իրավիճակային պատմության վերլուծություն։	.	դասվար

14	Ամանորի նախապատրաստում, տոնական բացիկների պատրաստում:		դասվար
15	Դաս-միջոցառում նվիրված Ամանորին	.	դասվար
16	«Անվտանգ երևակայության» անկյան պատրաստում:		դասվար
17	«Անվտանգ երևակայության» վերաբերյալ մուլտֆիլմի դիտում:		դասվար
18	Բանակը հայրենիքի սիրտն է:		դասվար
19	Բարեխիղճ վերաբերմունք աշխատանքի նկատմամբ:		դասվար
20	Հայրենասիրություն. խրախուսել հայրենիքի հանդեպ սերը և մեծպատասխանատվությունը:		դասվար
21	Բազմազանություն: Զրուցել շրջապատում տեղի ունեցող դրական և բացասական երևույթների և դրանց ազդեցությունը մարդկանց վրա:		դասվար
22	Գիրք նվիրելու օր: Գիրքը գիտելիքի աղբյուր է:Անաղարտ պահել մայրենի լեզուն:	.	դասվար
23	« Դռները բացեք գարուն է գալիս »	.	դասվար
24	Բոլորս տարբեր ենք, բոլորս ապրում ենք միասին: Ներկայացնել բոլոր ազգերի, ժողովուրդների սովորություններին ու առանձնահատկություններինբնորոշ գծերը:		դասվար
25	Մայրության տոն:		դասվար
26	Կոնֆլիկտների հաղթահարում: Սովորողներին ներկայացնել իրավիճակային պատմություն, որտեղ հերոսները կոնֆլիկտները հաղթահարելու տարբերելքեր են գտնում:	.	դասվար
27	«Իմ իրավունքները»: Զրուցել աշակերտների իրավունքների մասին:		դասվար
28	Սուրբ Զատիկ	10. 04. 2024թ.	դասվար

29	Իրավիճակին համապատասխան որոշումների կայացում	17. 04. 2024թ.	դասվար
30	Մեծ Եղեռն:	24. 04. 2024թ.	դասվար
31	Մայիսը հաղթանակների ամիս է։ Զրուցել մայիսյան հաղթանակների, մեր հերոսների մասին։	01. 05. 2024թ.	դասվար
32	«Ժամանակը ոսկի է»: Ինչպես խնայել ժամանակը	08. 05. 2024թ.	դասվար
33	«Ես մեկ տարով էլ մեծացա»: Ավատվեց ուսումնական տարին։	15. 05. 2024թ.	դասվար
34	Հանձնարարություններ ամառային արձակուրդների համար:	22. 05. 2024թ.	դասվար